ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 13.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/14

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Արասո» ՍՊԸ-ի 13.06.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Արասո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Արասո» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 13.06.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ թվով 3000 մասնակիցների համար Ամանորին նվիրված միջոցառման կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված N ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/4 ծածկագրով բաց ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտեր են ներկայացրել «Արասո» ՍՊԸ-ն և Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն:

Գնահատող հանձնաժողովի 07.06.2017թ. որոշմամբ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատել է բավարար, սակայն վերջինս չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընկերությունը նշել է, որ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել, և որոշումը կայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) խախտումներով, ինչը չի բխում ՀՀ գործող օրենսդրության պահանջներից:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել է Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, ինչպես նաև Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

Ընկերությունը մեջբերել է Օրենքի ՝

• 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջները.

«Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն»:

• 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը.

«Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

• 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջը.

«Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընկերությունը որպես իրավական հիմք նշել է, որ խախտվել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, քանի որ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի հիմնավորման նպատակով ներկայացվող փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը, և ղեկավարվելով Օրենքի 45-րդ հոդվածով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, և 49-րդ հոդվածով՝ Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոցներ Ընթացակարգը կասեցնելու մասին:

2. Դադարեցնել՝

• 07.06.2017թ. կայացած նիստում՝ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումը,

• Օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Խորհրդի նիստերին մասնակցում էին «Արասո» ՍՊԸ-ի տնօրեն Հովհաննես Պողոսյանը և լիազորված անձ Արմեն Նահապետյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) գրությամբ Խորհրդին է ներկայացրել N ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/4 ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, Ընթացակարգի բացող անդամների կողմից հայտերի բացման 25.05.2017թ. թիվ 2 արձանագրության, գնահատող հանձնաժողովի 25.05.2017թ. թիվ 3 և 07.06.2017թ. թիվ 4 նիստերի արձանագրությունների պատճենները, գնահատող հանձնաժողովի 07.06.2017թ. թիվ 1.3 որոշմամբ հաստատված N ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/4 ծածկագրով բաց ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված Հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ Հրավերով նախատեսված փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ 3 անվանում մշակութային միջոցառումների ձեռքբերման համար հայտարարված N ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/4 ծածկագրով բաց ընթացակարգով մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել «Արասո» ՍՊԸ-ն և «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ն:

Հանձնաժողովի կողմից, համաձայն գործող կարգի, ուսումնասիրվել են ընկերությունների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը և գնահատվել բավարար, որի արդյունքում 1-ին չափաբաժնով, համաձայն ներկայացված գնային

առաջարկների, 1-ին տեղն զբաղեցնող է ճանաչվել Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ն, 2-րդ չափաբաժնով 1-ին տեղն զբաղեցնող է ճանաչվել «Արասո» ՍՊԸ–ն, իսկ 3-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ առաջարկների բացակայության պատճառով»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի ներկայացուցիչներ՝ ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱԴ ԳՓՁ վարչության աշխատակիցներ Կարո Պողոսյանը, Անուշ Մաղաքյանը և Գագիկ Ուստյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն ուսումնասիրել է «Արասո» ՍՊԸ-ի 13.06.2017թ. ներկայացրած բողոքը, «ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/4» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2017թ. ապրիլի 13-ի որոշմամբ հաստատված հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ընթացակարգի բացող անդամների կողմից հայտերի բացման 25.05.2017թ. թիվ 2 արձանագրությունը, գնահատող հանձնաժողովի 25.05.2017թ. նիստի թիվ 3 և 07.06.2017թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, գնահատող հանձնաժողովի 23.06.2017թ. նիստի թիվ 5 և 29.06.2017թ. նիստի թիվ 6 արձանագրությունները, «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, Պատվիրատուի և «Արասո» ՍՊԸ-ի ներկայացուցիչների դիրքորոշումները և կարծիքները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը թվով 3000 մասնակիցների համար Ամանորին նվիրված միջոցառման կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով 14.04.2017թ. հայտարարել է N ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/4 ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել «Արասո» ՍՊԸ-ն և Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն:

Գնահատող հանձնաժողովի կողմից 07.06.2017թ. թիվ 4 արձանագրությամբ ընդունված որոշմամբ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Բողոքի քննության նպատակով 19.06.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ, Ընկերության ներկայացուցիչը պնդեց բողոքն ամբողջությամբ և հայտնեց, որ համոզված է, որ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր ներկայացված՝ նախկինում կատարված պայմանագրի հաշիվ-ապրանքագրերում ներառված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը և կեղծ է և խնդրեց Խորհրդին հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ նշված փաստաթղթի իսկությունը պարզելու նպատակով:

Խորհուրդը Ընկերությանը ներկայացուցչին հայտնեց, որ նշված հարցումը կարող է իրականացնել Պատվիրատուն՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 71-րդ կետով սահմանված պահանջներով:

Պատվիրատուի ներկայացուցիչները նշեցին, որ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի գնահատման ընթացքում Հանձնաժողովի մոտ նշված փաստաթուղթը որևէ կասկած չի հարուցել, սակայն Խորհրդին հայտնեցին, որ նշված հարցումն իրականացնելու նպատակով կգումարեն նիստ և հետագա գործողությունների մասին տեղեկատվությունը կտրամադրեն Խորհրդին:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 29.06.2017թ. հրավիրել է N ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/4 ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի նիստ, որի արձանագրությունը տրամադրվել է Խորհրդին:

Պատվիրատուն Խորհրդին ներկայացրեց Հանձնաժողովի 29.06.2017թ. նիստի թիվ 6 արձանագրությունը, որի 1.1 կետով Հանձնաժողովը արձանագրել է հետևյալը.

«Քննարկելով «Արասո» ՍՊԸ-ի կողմից 27.06.2017թ. ներկայացված նոր գրությունը, հիմք ընդունելով դրա վերաբերյալ պատվիրատուի ղեկավարի հանձնարարականը, լսելով «Արասո» ՍՊԸ-ի մեկնաբանությունները և հաշվի առնելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 19.06.2017թ. և 26.06.2017թ. կայացած նիստերի ընթացքում արված առաջարկները հարցում կատարելու վերաբերյալ՝ հայնձնաժողովը, առաջնորդվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N168-Ն որոշման 71-րդ կետով, որոշեց դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ Ա/Ձ Աշոտ Ազատի Ազիզյանի կողմից որպես հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված նմանատիպ պայմանագրի իսկությունը ստուգելու նպատակով:»:

Խորհուրդը 03.07.2017թ. կայացած նիստում՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցումը կատարվել է 30.06.2017թ. որոշեց բողոքի վերաբերյալ որոշման ընդունման համար նախատեսված ժամկետը երկարաձգել մինչև 10 օրացուցային օրով՝ մինչև 13.07.2017թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 31-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կարգի 65-րդ կետով սահմանված է, որ.

«Մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի

շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Կարգի 71-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) տվյալ մասնակցի հայտը մերժվում է.

2) մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Խորհուրդը հաշվի առնելով բողոքարկման համար Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված բողոքի վերաբերյալ գրավոր որոշում կայացնելու համար սահմանված ժամկետները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Խորհրդին չներկայացվեց որևէ ապացույց այն մասին, որ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր ներկայացված՝ նախկինում կատարված պայմանագրի հաշիվ-ապրանքագրերում ներառված տեղեկատվությունը չի համապատասխանում

իրականությանը և կեղծ է, Խորհուրդը գտնում է, որ Արասո» ՍՊԸ-ի կողմից 13.06.2017թ. ներկայացրած բողոքն անհիմն է:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Արասո» ՍՊԸ-ի կողմից 13.06.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ